Ազգային ուսումնական օլիմպիադա

Պատմություն

II փուլ

X-XII դասարաններ

2023-2024 ուսումնական տարի

<u>Հրահանգ 1-3 առաջադրանքների համար.</u> *Համապատասխանեցրե՛ք երկու սյուներում տրված տեղեկությունները: Յուրաքանչյուր առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 4:*

1. **Որոշե՛ք համապատասխանությունը քաղաքի և նրա տեսարժան վայրերի միջև.**

A		1	Միլան
B		2	Կորդոբա
C		3	Լիսաբոն

D		4	Փարիզ
		5	Ֆլորենցիա
		6	Աթենք

2. Որոշե՛ք համապատասխանությունը դիմանկարի և պատմական անձի միջև.

	Դիմանկար		Պատմական անձ
A		1	Բենջամին Ֆրանկլին

B		2	Մարկիզ դը Լաֆայետ
C		3	Վոլտեր
D		4	Դենի Դիդրո
		5	Ջորջ Վաշինգտոն
		6	Շառլ Լուի դը Մոնտեսքյո

3. **Որոշե՛ք համապատասխանությունը պատմական վեպի և դրա հեղինակի միջև.**

	Պատմական վեպ		Հեղինակ
A	Երկաթե թագավորը	1	Շտեֆան Ցվայգ
B	Պատմություն երկու քաղաքների մասին	2	Վալտեր Սքոթ
C	«Յո՞ երթաս»	3	Չարլզ Դիկենս
D	Մարիա Ստյուարտ	4	Հենրիկ Սենկևիչ
		5	Ալեքսանդր Դյումա
		6	Մորիս Դրյուոն

<u>Հրահանգ 4 առաջադրանքի համար.</u> *Ուշադիր ուսումնասիրե՛ք նկարը և պատասխանե՛ք հարցերին: Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 5:*



Հարցեր.

4.1. Անվանե՛ք նկարի վրա ներկայացված ստեղծագործության հեղինակի ինքնությունը: Ո՞ւմ պատվերով է նա կերտել այս կտավը:

4.2. Անվանե՛ք նկարում 14 և 15 թվանշաններով նշված անձանց ինքնությունը: Ինչո՞վ էին նրանք կապված միմյանց հետ:

4.3. Ո՞ր թանգարանում է պահվում ներկայացված կտավը:

<u>Հրահանգ 5 առաջադրանքի համար.</u> *Ձեր առջև է առաջադրանքի պայմանը: Ուշադիր ընթերցեք այն և ըստ առաջարկված հարցերի ստորև ներկայացված թեմայի վերաբերյալ ձևակերպե՛ք ձեր տեսակետները և փաստարկները:*

- ***Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Դատողությունը պետք է լինի տրամաբանորեն ճիշտ:***
- ***Ձեր գրավորը չի ստուգվի, եթե տրված առաջադրանքն ամբողջությամբ ընկալված է ոչ պատշաճ կերպով կամ լեզվական առումով այնքան սխալներ է պարունակում, որ դժվար է հասկանալ միտքը:***

Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 5:

5. 732 թվականին տեղի ունեցավ Արևմտյան Եվրոպայի պատմության համար չափազանց կարևոր Պուատիեի ճակատամարտը:

Հարցեր.

5.1. Նշե՛ք այս ճակատամարտին մասնակցող երկու կողմերին:

5.2. Ո՞ւմ համար էր այս ճակատամարտի արդյունքը ձեռնտու, բացի անմիջապես հաղթող կողմից, և ինչո՞ւմ էր արտահայտվում այդ արդյունքը:

5.3. Անվանե՛ք համանման իրադարձություն V դարի Եվրոպայում: Բերե՛ք երկու փաստարկ այդ համանմանությունը հաստատելու համար:

<u>Հրահանգ 6 առաջադրանքի համար.</u> *Ուշադիր ընթերցեք պատմական փաստաթուղթը և պատասխանե՛ք հարցերին: Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 8:*

Հռոմի Պապի նամակը վրաց թագավորին

Խաղաղություն և առաքելական օրհնություն Վրաց հանճարեղ թագավոր Կոնստանտինեին:

Ստացանք քո ուղարկած նամակը քո վարդապետ և դեսպան վանական Նիլից:

Մենք, որքան կարող ենք, խնդրում և աղոթում ենք Տիրոջ անունով, որպեսզի չփոխես քո գովելի մտադրությունը, համոզես և հրամայես քո հպատակներին հետևել քո կամքին և օրինակ վերցնել քեզանից այս սուրբ գործում:

Սրա հետ մեկտեղ, քանի որ դու, նույն Նիլոյի միջոցով, խնդրում ես ուղարկել քեզ Ֆլորենցիայի ժողովին կայացված կրոնական որոշումը, որտեղ մեր նախորդի օրոք տեղի ունեցավ աշխարհի՝ ինչպես հունական, այնպես էլ լատինական եկեղեցիների համաձայնությունը, հետևաբար, այժմ քեզ ենք ուղարկում ժողովի որոշումը: Առաջարկում ենք քեզ հրամայել՝ որպեսզի տարածեն և ընդունեն ժողովի որոշումը քո երկրի բոլոր գավառներում: Այդ ժամանակ մենք բոլորս կլինենք միասնական և մտերիմ: Եթե այդպես վարվենք, ապա ոչ մի թշնամական զենք մեզ չի կարողանա վնաս պատճառել:

Անչափ շնորհակալ եմ քո նվերների համար, որոնք մեծ հաճույքով ընդունեցի:

Կազմված է Հռոմում Սուրբ Պետրոսի եկեղեցում:

Հարցեր.

6.1. Ձեր կարծիքով, նամակի բովանդակության նախատեսմամբ, ի՞նչ է ենթադրում Հռոմի պապի հիշատակած «սուրբ գործը»:

6.2. Ըստ ձեզ՝ ո՞ր եկեղեցին է ենթադրվում «հունականի» տակ:

6.3. Ըստ ձեզ՝ ո՞ր եկեղեցին է ենթադրվում «լատինականի» տակ:

6.4. Համաձայն նամակի տեքստի՝ կո՞ղմ էին արդյոք վրացիները Ֆերարա-Ֆլորենցիայի ժողովին ընդունված «Աշխարհի եկեղեցիների համաձայնությանը»: Անպայման բերե՛ք փաստարկ՝ հիմնվելով նամակի տեքստում առկա տեղեկատվության վրա:

6.5 . Ըստ նամակի տեքստի՝ թագավորի նամակից բացի, ևս ի՞նչ է բերել Նիլ վանականը Հռոմի Պապին:

6.6. Եթե դուք լինեիք Կոնստանտինե թագավորի ժամանակակիցը, կաջակցեի՞ք արդյոք Հռոմի Պապի հետ հարաբերություններին և ի՞նչ փաստարկ կբերեիք ձեր տեսակետը հաստատելու համար:

6.7. Ո՞ր թագավորության թագավորն էր նամակում հիշատակված Կոնստանտինեն:

6.8. Անվանե՛ք՝ Կոնստանտինեին նախորդող վրաց միապետին, որին ևս նամակ է ուղարկել Հռոմի Պապը, և հիշե՛ք, թե ինչի մասին էր այդ նամակը: